

**«Հայաստանի Պետական Տնտեսագիտական
Համալսարան» ՊՈԱԿ**

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ	Էջ
Առդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	8
Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ	9-28



ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Պետական Տնտեսագիտական
Համալսարան» ՊՈԱԿ ղեկավարությանը

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության և իր դուստր կազմակերպությունների (այսուհետ՝ Խմբի) կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2011թ., հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվություն

Նշված ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար պատասխանատվությունը կրում է ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք գործող աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը եւ բացահայտումները: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը,

կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիքի ձևափոխման հիմքեր

2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 455,139 հազար դրամ սկզբնական արժեք ունեցող և Խմբին տնտեսական օգուտներ բերող հիմնական միջոցներ հաշվառվում են զրո հաշվեկշռային արժեքով, ինչպես նաև, որպես հիմնական միջոց հաշվառվող գրքերի համար Խմբի կողմից մաշվածություն չի հաշվարկվում, ինչի հետևանքով Խմբի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը ֆինանսական հաշվետվություններում կարող է խեղաթյուրված ներկայացվել:

Խումբը 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվառում է ուսման վարձերի գծով դեբիտորական պարտքեր, որոնք «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի համաձայն ենթակա են ապաճանաչման:


Ձևափոխված կարծիք

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ նախորդ պարբերությամբ նշված հանգամանքների ազդեցության, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը՝ առ 31-ը դեկտեմբերի 2011թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն:

Հանգամանքների շարադրում

Ուշադրություն ենք հրավիրում այն փաստին, որ ներկայացված համեմատական տվյալները հիմնված են Խմբի 2010թ դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա: Մեզ չի հանձնարարվել իրականացնել 2010թ համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ կամ կիրառել որևէ այլ ընթացակարգեր այդ ֆինանսական հաշվետվությունների հետ կապված, այդ իսկ պատճառով, մենք կարծիք կամ որևէ այլ հավաստիացում չենք արտահայտում 2010թ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ տնօրեն
Տիգրան Մարտիրոսյան



30 մայիսի 2012թ
Երևան



Բաժնետեր աուդիտոր
Հայկ Մարգարյան



«Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան» ՊՈԱԿ
 Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթագրություն	2011 31 դեկտեմբեր	2010 31 դեկտեմբեր	2010 01 հունվար
ԱԿՏԻՎՆԵՐ				
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	4	1,313,964	1,388,786	1,452,364
Ոչ նյութական ակտիվներ	5	4,847	208	233
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		1,318,811	1,388,994	1,452,597
<i>Ընթացիկ ակտիվներ</i>				
Պաշարներ	6	20,419	18,966	16,945
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	7	370,762	169,708	16,229
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	8	16,199	13,567	29,636
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	465,158	421,591	309,788
Այլ ընթացիկ ակտիվներ		938	-	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		873,476	623,832	372,598
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		2,192,287	2,012,826	1,825,195
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ				
<i>Սեփական կապիտալ</i>				
Կանոնադրական կապիտալ		-	-	90,528
Պահուստային կապիտալ		16,648	40,921	38,142
Սեփական կապիտալի այլ տարրեր	10	372,523	361,696	159,694
Ընդամենը սեփական կապիտալ		389,171	402,617	288,364
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>				
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	1,063,347	1,150,339	1,186,301
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		1,063,347	1,150,339	1,186,301
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>				
Կրեդիտորական պարտքեր և կանխավճարներ	12	685,665	420,043	342,041
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	13	10,298	3,333	58
Կրեդիտորական պարտքեր սոցալ վճարների գծով		27,729	24,277	394
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	14	3,754	4,183	5,277
Այլ ընթացիկ պարտավորություններ	15	12,323	8,034	2,760
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		739,769	459,870	350,530
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		2,192,287	2,012,826	1,825,195

Y. Yuzvich

Կորյուն Աթոյան
 ռեկտոր




Shirak

Անուշ Մարգարյան
 գլխավոր հաշվապահ


Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան» ՊՈԱԿ
 Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծանոթագրություն	Հազար ՀՀ դրամ	
		2011	2010
Հասույթ	16	2,764,140	2,619,141
Վաճառքի ինքնարժեք	17	(1,525,200)	(2,232,769)
Համախառն շահույթ		1,238,940	386,372
Իրացման ծախսեր	18	(3,267)	(1,344)
Վարչական ծախսեր	19	(1,247,106)	(271,388)
Արտադրանքի, ապրանքների, աշխատաքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)		(11,433)	113,640
Գործառնական այլ եկամուտներ	20	36,113	12,199
Գործառնական այլ ծախսեր	21	(42,858)	(75,881)
Գործառնական շահույթ (վնաս)		(18,178)	49,958
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	22	12,431	32,607
Չուտ շահույթ (վնաս) մինչև հարկումը		(5,747)	82,565
Շահութահարկի գծով ծախս	23	(18,526)	(24,470)
Տարվա շահույթ (վնաս)		(24,273)	58,095
Տարվա այլ համապարփակ եկամուտ հարկերից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ արդյունք		(24,273)	58,095


 Կորյուն Աթոյան
 ռեկտոր





 Անուշ Ծարգարյան
 գլխավոր հաշվապահ


Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան» ՊՈԱԿ
 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Կանոնադրական կապիտալի գուտ գումար	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ	Հազար ՀՀ դրամ	
				Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
Մնացորդը առ 01 հունվարի 2010թ	90,528	38,142	-	159,694	288,364
Հետ գնված բաժնեմաս	(90,528)	-	-	90,528	-
2010թ գուտ շահույթ	-	-	58,095	-	58,095
Ներքին շարժեր	-	2,779	(58,095)	55,316	-
Սխալի ուղղում	-	-	-	56,158	56,158
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ	-	40,921	-	361,696	402,617
Սխալների ուղղում	-	-	-	10,827	10,827
2011թ գուտ շահույթ (վնաս)	-	-	(24,273)	-	(24,273)
Ներքին շարժեր	-	(24,273)	24,273	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ	-	16,648	-	372,523	389,171


 Կորյուն Աթոյան
 ղեկավար





 Անուշ Մարգարյան
 գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան» ՊՈԱԿ
 Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար ՀՀ դրամ

	2011	2010
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Ապրանքների վաճառքից, աշխ. կատարումից, ծառ. մատուցումից մուտքեր	3,022,974	2,589,938
Կրթաթոշակ	83,768	99,515
Ստացված շնորհների գծով մուտքեր	23,065	-
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	-	22,901
Վճարումներ նյութերի, ապրանքների ձեռք բերման, աշխ. կատարման, ծառ. մատ. գծով	(142,947)	(158,091)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից, այդ թվում՝ արհմիություն	(2,199,867)	(1,657,384)
Վճարումներ բյուջե	(274,395)	(264,879)
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմանդրամ	(242,561)	(253,132)
Վճարված շահութահարկ	(18,876)	(14,000)
Տրված դրամաշնորհներ և օգնություններ	(42,917)	-
Կրթաթոշակի վճարում	(82,668)	(95,134)
Այլ վճարումներ	(22,504)	(58,066)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	103,072	211,668
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Վճարումներ հիմնական միջոցների ձեռք բերման, նորոգման և կապիտալացման համար	(55,337)	(101,583)
Վճարումներ ոչ նյութական ակտիվների ձեռք բերման և ընթացիկ սպասարկման համար	(5,687)	-
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր	1,519	1,777
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(59,505)	(99,806)
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսք	43,567	111,862
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	421,591	309,788
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	-	(59)
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	465,158	421,591



Կոբյուն Աթոյան
 ռեկտոր





Անուշ Ասրգալյան
 գլխավոր հաշվապահ

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների քաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Խմբի նկարագիրը

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը հիմնադրվել է 1930 թվականին և անցել է կազմավորման մի քանի փուլ: 1975 թվականին ձևավորվել է որպես ինքնուրույն միավոր՝ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ, ապա Երևանի պետական տնտեսագիտական համալսարան: 1995թ. սեպտեմբերից ՀՀ կառավարության որոշմամբ նոր ուսումնական տարին բուհը մեկնարկել է նոր մասնաշենքում՝ Նալբանդյան 128 հասցեում և բուհի 4 ֆակուլտետները միավորվել են մեկ հարկի տակ: Միայն Քանաքեռ-Չեյթուն վարչական շրջանում է պահպանվել մասնաշենքերից մեկը: 2006 թվականին վերանվանվել է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն: Բուհն իր գոյության ընթացքում տվել է ավելի քան 30.000 շրջանավարտ: Համալսարանի 6 ֆակուլտետներում ընդգրկված է 31 ամբիոն (21-ը՝ մասնագիտական, 10-ը՝ ոչ մասնագիտական): Դասախոսում են՝ 1 ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, շուրջ 40 գիտության դոկտոր, ավելի քան 40 պրոֆեսոր, ավելի քան 140 գիտության թեկնածու, դոցենտ, շուրջ 90 ասիստենտ, ավելի քան 100 դասախոս և համատեղությամբ 60-ից ավելի բարձրակարգ մասնագետ, 18 մասնագիտությամբ և բազմաթիվ մասնագիտացումներով բուհում սովորում են ավելի քան 7000 ուսանող: Համալսարանում իրականացվում է բակալավրիատի առկա (2005 թվականից՝ նաև հեռակա) 2004 թվականից մագիստրատուրայի առկա (2009 թվականից նաև՝ հեռակա) ուսուցում: Բակալավրիատի առկա և հեռակա, մագիստրատուրայի առկա ուսուցումն իրականացվում է կրեդիտային համակարգով: Համալսարանն ունի նաև ասպիրանտուրա՝ առկա և հեռակա ուսուցմամբ: Ասպիրանտական կրթությունը 2010-2011թթ. ուսումնական տարվանից նույնպես անցում է կատարել կրեդիտային համակարգի: ՀՊՏՀ-ն կրթական և գիտական կապեր ունի աշխարհի բազմաթիվ համալսարանների հետ:

ՀՊՏՀ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

<i>Անվանումը</i>	«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ
<i>Գրանցման համարը</i>	273.210.03225
<i>Գրանցման վկայական</i>	03 Ա 054452
<i>Գրանցման ամսաթիվը</i>	05.06.2002 թ.
<i>Գտնվելու վայրը</i>	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 128
<i>Գործունեության հասցեն</i>	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 128
<i>Հարկ վճարողի հաշվառման համարը</i>	01503224

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը մասնաճյուղեր է հիմնել Հայաստանի երկու շրջաններում՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի և Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքներում:

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը հիմնադրվել է 1997 թ. մայիսի 30-ին՝ ըստ ՀՀ Կառավարության 131-րդ որոշման: Այն պատրաստում է տնտեսագետներ հետևյալ մասնագիտություններով և մասնագիտացումներով (միայն առկա ուսուցմամբ)՝ կառավարում (բակալավրիատ), ֆինանսներ (բակալավրիատ, մագիստրատուրա), կոմերցիա (բակալավրիատ), բիզնեսի կազմակերպում

(մագիստրատուրա), միջազգային տնտեսական հարաբերություններ (բակալավրիատ), հաշվապահական հաշվառում՝ ըստ ճյուղերի (բակալավրիատ, մագիստրատուրա): Ուսանողների թիվը 500 է: Մասնաճյուղի տնօրենն է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Սամսոն Գավոյանը:

<i>Անվանումը</i>	ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ
<i>Գրանցման համարը</i>	29.060.02092
<i>Գրանցման վկայական</i>	01 Բ 001247
<i>Գրանցման ամսաթիվը</i>	22.09.2004 թ.
<i>Գտնվելու վայրը</i>	ՀՀ, ք. Գյումրի, Վ. Սարգսյան 32
<i>Գործունեության հասցեն</i>	ՀՀ, ք. Գյումրի, Վ. Սարգսյան 32
<i>Հարկ վճարողի հաշվառման համարը</i>	05516978

ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղը հիմնադրվել է 2007 թվականին ՀՀ Կառավարության որոշմամբ: Առաջին ընդունելությունը կազմակերպվել է 2008 թվականին: Տնտեսագետներ են թողարկվում երեք մասնագիտությունների գծով՝ ֆինանսներ, միջազգային տնտեսական հարաբերություններ և կառավարում: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի հիմնական մասը ժամանում է մայրաքաղաքից: Ուսանողների թիվը շուրջ 100 է: Մասնաճյուղի տնօրենն է տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Սոս Խաչիկյանը:


<i>Անվանումը</i>	ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ
<i>Գրանցման համարը</i>	65.060.00594
<i>Գրանցման վկայական</i>	01 Բ 001862
<i>Գրանցման ամսաթիվը</i>	20.03.2008թ.
<i>Գտնվելու վայրը</i>	ՀՀ, ք. Եղեգնաձոր, Վայքի 4
<i>Գործունեության հասցեն</i>	ՀՀ, ք. Եղեգնաձոր, Վայքի 4
<i>Հարկ վճարողի հաշվառման համարը</i>	08909531

ՀՊՏՀ երկու մասնաճյուղերն էլ մայր բուհի հետ (այսուհետ մայր բուհը և երկու մասնաճյուղերը միասին՝ Խումբ) պահպանում են սերտ կապեր, իրենց գործունեությունը ծավալում փոխհամաձայնեցված և ուղղված մեկ ընդհանուր նպատակի:

2011թվականի ընթացքում Խմբի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 821 աշխատակից (2010 թվականի ընթացքում՝ 748 աշխատակից):

1.2. Կորպորատիվ կառուցվածքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ



1.3. Հայաստանի գործարար միջավայրը

Խումբն իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում և գտնվում է շարունակական բնույթ կրող քաղաքական և տնտեսական փոփոխությունների ազդեցության տակ: Հայաստանում բացակայում են ազատ շուկայական տնտեսությանը բնորոշ կատարյալ գործարար միջավայրը և համապատասխան ենթակառուցվածքները, ինչպես նաև դեռ շարունակվում են արդեն ավանդույթ դարձած հարկային օրենսդրության տարերային փոփոխությունները, ինչի հետևանքով դրանց վերաբերյալ Խմբի ղեկավարության և պետական մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

Ներկայումս Հայաստանի բարձրագույն կրթության առջև ծառայած են բարեփոխումների ճնշումը, ինչպես նաև զարգացման հսկայական հնարավորությունները: Հայաստանը Բոլոնիայի գործընթացին միացել է Բերգենում` 2005 թվականին: Այդ պահից սկսած Հայաստանի Կառավարության, ՀՀ Կրթության և գիտության նախարարության և բարձրագույն կրթության հաստատությունների հիմնական բեռները հանդիսացել են երկփուլ համակարգի, կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի և դիպլոմի հավելվածի համակարգի ներմուծումը, դոկտորական ծրագրերի ամրապնդումը` իբրև կամուրջ բարձրագույն կրթության և հետազոտական ոլորտների միջև և փոխճանաչման և որակի ապահովման ազգային մարմնի հիմնադրումը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն հնարավորինս արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

2.1. Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն, որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների` հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

2.2. ՖՀՄՍ առաջին անգամ որդեգրում

Սույն ֆինանսական հաշվետվությունները հանդիսանում են Խմբի` ՖՀՄՍ-ներով պատրաստվող առաջին ֆինանսական հաշվետվությունները: Խմբի` ՖՀՄՍ-ներով պատրաստվող առաջին ֆինանսական հաշվետվությունները պետք է առնվազն ներառեն ֆինանսական վիճակի մասին երեք հաշվետվություն: Հետագա ժամանակաշրջաններում ՀՀՄՍ 1-ը պահանջում է, որպեսզի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվեն երկու համադրելի ժամանակաշրջաններ միայն որոշակի հանգամանքներում:

Խմբի կողմից առաջին անգամ ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս տարբերություններ չեն առաջացել, որպեսզի Խումբը ճշգրտումներ կատարի իր ՀՀՀՀՍ պահանջների համաձայն պատրաստված համախմբված ֆինանսական հաշվետվություններում (նախկին համընդհանուր ընդունված հաշվապահական սկզբունքներ):

2.3. Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.4. Գործառնական և ներկայացման արժույթ

Կազմակերպության գործառնական արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Կազմակերպությունը: Խմբի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

2.5. Անընդհատություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության սկզբունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

2.6. Համադրելիություն

Ընթացիկ ֆինանսական տարվա տվյալները համադրելի են նախորդ ժամանակաշրջանի ներկայացված տվյալների հետ: Ընթացիկ տարվա ֆինանսական հաշվետվություններում ներկայացման մոտեցման փոփոխության դեպքում նախորդ տարվա համեմատական տեղեկատվության ներկայացումը նույնպես փոփոխվում է:

2.7. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՄ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար դեկլարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

2.8. Վերահասակարգում

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարում ներկայացման փոփոխությունների հետ համադրելիությունն ապահովելու նպատակով:

2.9. Խմբի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Խումբը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը: Այդ ստանդարտներից և փոփոխություններից որոշները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Խմբի գործունեության վրա: Խումբը թվարկել է բոլոր այն ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել, որոնք ողջամտորեն ակնկալվում է, որ ազդեցություն կունենան հաշվապահական հաշվառման քաղաքականության, ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա (անտեսելով այն ստանդարտները և փոփոխությունները, որոնք ոչ մի ազդեցություն չեն ունենա):

ՖՀՄՄ 10 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ»

ՖՀՄՄ 10-ը փոխարինում է ՀՀՄՄ 27 «Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ» ստանդարտի այն մասը, որը վերաբերում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաշվառմանը: Այն նաև ներառում է ՄՄԿ 12 «Համախմբում. հատուկ նշանակության կազմակերպություններ» մեկնաբանությունում բարձրացված խնդիրներ:

ՖՀՄՄ 10-ը սահմանում է միասնական վերահսկողության մոդել, որը կիրառում է կազմակերպությունների նկատմամբ՝ ներառյալ հատուկ նշանակության կազմակերպությունները: Ի տարբերություն ՀՀՄՄ 27-ում ներկայացված պահանջների ՖՀՄՄ-ի կողմից ներկայացված փոփոխությունները դեկլարությունից կպահանջեն կիրառել էական դատողություններ՝ որոշելու, թե որ կազմակերպություններն են վերահսկվում և, որի հետևանքով, պահանջում են համախմբում մայր կազմակերպության կողմից:

Այս ստանդարտը ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՄ 12 «Այլ կազմակերպություններում մասնակցության բացահայտում»

ՖՀՄՄ 12 ներառում է ՖՀՄՄ 27-ում ֆինանսական հաշվետվությունների համախմբման հետ կապված բոլոր բացահայտումները, ինչպես նաև ՀՀՄՄ 31 և ՀՀՄՄ 28 ստանդարտներում նախկինում ներառված բացահայտումները: Այս բացահայտումները վերաբերում են կազմակերպության մասնակցությանը դուստր կազմակերպություններում, համատեղ գործունեության համաձայնություններում, ասոցիացված և կառուցվածքային կազմակերպություններում: Պահանջվում են նաև մի շարք նոր բացահայտումներ: Այս ստանդարտը ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՄ 9 «Ֆինանսական գործիքներ՝ դասակարգումը և չափումը»

ՖՀՄՄ 9-ի թողարկումը արտացոլում է ՀՀՄՄԽ-ի աշխատանքների առաջին փուլը ՀՀՄՄ 39-ը փոխարինելու ուղղությամբ և կիրառվում է ՀՀՄՄ 39-ում սահմանված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման նկատմամբ: Ստանդարտը ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Հետագա փուլերում ՀՀՄՄԽ-ն կանդրադառնա հեջավորման հաշվառմանը և ֆինանսական ակտիվների արժեզրկմանը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

3.1. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարներ, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Խմբի հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

<i>Դասի անվանում</i>	<i>Օգտակար ծառայությունը (տարի)</i>
Շենքեր, շինություններ	20
Մեքենաներ և սարքավորումներ	1-5
Տրանսպորտային միջոցներ	5
Արտադրական գույք, տնտեսական և այլ գույք	1-5
Համակարգչային տեխնիկա	1
Այլ հիմնական միջոցներ	10

3.2. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

<i>Դասի անվանում</i>	<i>Օգտակար ծառայությունը</i>
Համակարգչային ծրագրեր	5 տարի
Լիցենզիաներ	իրավաբանորեն ամրագրված իրավունքի ժամկետում

3.3. Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները, արտադրանքի վերամշակման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Ձեռք բերման ծախսումներն են գնման գինը, ներմուծման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Խմբին ետ վերադարձման, մաքսային բրոքեր (միջնորդ) հանդիսացող անձանց վճարվող գումարները, ինչպես նաև այդ պաշարների ձեռք բերման հետ կապված տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները:

Ձեռք բերման ծախսումները որոշելիս առևտրային գեղչերը, գների իջեցումները հանվում են:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է ԱՄԱԵ (ՖԻՖՈ) արժեքի բանաձևով:

3.4. Վարձակալություն

Վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ, երբ վարձատուն է կրում վարձակալված ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները: Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարձակալված ակտիվների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը ճանաչվում են որպես ակտիվ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հիմնական միջոցներ» դասում: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության, ծախսագրվում են իրականացման պահին:

3.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից և բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Հաշիվներ բանկերում

Իր բնականոն գործունեության ընթացքում Խումբն օգտագործում է բանկերում տարբեր ժամանակաշրջանների համար բացված ընթացիկ հաշիվներ:

3.6. Ֆինանսական գործիքներ

Խումբը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում: Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Խմբի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. դեբիտորական պարտքեր, ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Խմբի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա՝ հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Խումբը սահմանում է իր ֆինանսական ակտիվների դասակարգումը սկզբնական ճանաչումից հետո և անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ կատարում է վերագնահատում յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Այնուհետև, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով: Դեբիտորական պարտքերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերի հետ կապված դրամական միջոցների հոսքերը չեն զեղչվում, եթե զեղչման ազդեցությունը էական չէ:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Որպես առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր են դասակարգվում մարման ենթակա այն գումարները, որոնք ստեղծվում են Խմբի կողմից ուղղակիորեն պարտատիրոջից (կրեդիտորից) ապրանքներ կամ ծառայություններ գնելու միջոցով:

Կրեդիտորական պարտքը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ Խումբը դառնում է գործարքի պայմանագրային կողմ, այսինքն՝ երբ առաջանում է պահանջի իրավունքը:

Սկզբնական ճանաչման պահին կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական հաշվում նշված գումարով:

Կրեդիտորական պարտքը դուրս է գրվում այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտականությունը կատարվել է, չեղյալ է համարվել կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը:

3.7. Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Արտարժույթ	31.12.2011թ	31.12.2010թ
1 Եվրո	498.72 դրամ	481.16 դրամ
1 ԱՄՆ դոլար	385.77 դրամ	363.44 դրամ

3.8. Շնորհներ

Խմբի կողմից շնորհների հաշվառումը իրականացվում է ՀՀՄՍ 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ստանդարտի համաձայն:

Շնորհները, ներառյալ իրական արժեքով չափվող ոչ դրամային շնորհները, չեն ճանաչվում, քանի որ չկա հիմնավոր հավաստիացում, որ.

- ա) Խումբը բավարարելու է դրանց կցված պայմանները. և
- բ) շնորհները ստացվելու են:

Շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Խումբը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները:

Շնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Խմբին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, ճանաչվում է շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

Ակտիվներին վերաբերող շնորհները, ներառյալ իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային շնորհները, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են՝ շնորհը գրանցելով որպես հետաձգված եկամուտ:

Շնորհը, որը դառնում է վերադարձման ենթակա, հաշվառվում է որպես հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություն: Եկամուտներին վերաբերող շնորհի վերադարձումը առաջին հերթին կատարվում է տվյալ շնորհի գծով չամորտիզացված հետաձգված կրեդիտային մնացորդի հաշվին: Այնքանով, որքանով վերադարձումը գերազանցում է այդպիսի հետաձգված կրեդիտային մնացորդը, կամ երբ հետաձգված կրեդիտային մնացորդ գոյություն չունի, վերադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում: Ակտիվին վերաբերող շնորհի վերադարձումը ճանաչվում է ակտիվի

հաշվեկշռային արժեքի ավելացում կամ վերադարձման ենթակա գումարի չափով հետաձգված եկամտի մնացորդի նվազեցում: Կուտակային լրացուցիչ մաշվածությունը, որը ճանաչված կլինե՞ր շահույթում կամ վնասում մինչև տվյալ ամսաթիվը, եթե չլինե՞ր շնորհը, անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.9. Արժեզրկում

Հիննական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինե՞ր, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինե՞ին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքերի պահուստի միջոցով:

3.10. Ծահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուղվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հինք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց և երբ վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է գուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.11. Աշխատակիցների հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվառման ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցել է ծառայություն, Խումբը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջկված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջկված գումարը, Խումբը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, սպազա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ ստանդարտներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, ՀՀՍՄ 2 «Պաշարներ» և ՀՀՍՄ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտները):

Խումբը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ. և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

3.12. Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Խմբի կողմից տրամադրված ցանկացած առևտրական գեղջերը և իջեցումների գումարները:

Ծառայությունների մատուցում

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:

3.13. Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խումբը միավորում է մայր կազմակերպության և իր դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները՝ տող առ տող իրար գումարելով ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամտի և ծախսի միանման հոդվածները:

Ներխմբային մնացորդները և գործարքները, ներառյալ եկամուտը և ծախսերը բացառվում են ամբողջությամբ: Ներխմբային գործարքներից առաջացած շահույթները և վնասները, որոնք ճանաչվում են ակտիվներում, օրինակ՝ պաշարներում և հիմնական միջոցներում, բացառվում են ամբողջությամբ: Ներխմբային վնասները կարող են վկայել արժեզրկման մասին, որը ճանաչվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում: Ներխմբային գործարքներից առաջացած շահույթների և վնասների բացառումից առաջացող ժամանակավոր տարբերությունների նկատմամբ կիրառվում է «Շահութահարկեր» ՀՀՄՄ 12-ը:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են՝ միանման գործարքների և նմանատիպ հանգամանքներում տեղի ունեցող այլ դեպքերի նկատմամբ կիրառելով միասնական հաշվապահական հաշվառման քաղաքականություն:

Եթե խմբի մի անդամն օգտագործում է հաշվապահական հաշվառման քաղաքականություն, որը տարբերվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում միանման գործարքների և նմանատիպ հանգամանքներում տեղի ունեցող այլ դեպքերի նկատմամբ օգտագործվողից, ապա, համախմբված

ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս, նրա ֆինանսական հաշվետվությունները ենթարկվում են համապատասխան ճշգրտումների:

4. Հիմնական միջոցներ

<i>Սկզբնական արժեք</i>						
	Շենքեր, շինությունների, կառուցվածքներ	Տրանսպորտային միջոցներ	Մեքենաներ և սարքավորումներ, համակարգչային տեխնիկա	Արտադրական, տնտեսական և այլ գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Մնացորդը առ 01.01.2010թ	1,523,361	31,708	268,318	244,734	94,354	2,162,475
Ավելացում	-	-	24,804	45,944	8,056	78,804
Օտարում	-	-	(709)	(5,418)	(4,293)	(10,420)
Կապիտալացում	20,811	-	-	-	-	20,811
Մնացորդը առ 31.12.2010թ	1,544,172	31,708	292,413	285,260	98,117	2,251,670
Ավելացում	-	10,500	9,594	12,683	18,938	51,715
Օտարում	-	-	(59,311)	(10,356)	(3,459)	(73,126)
Կապիտալացում	35,474	-	-	-	-	35,474
Մնացորդը առ 31.12.2011թ	1,579,646	42,208	242,696	287,587	113,596	2,265,733
<i>Մաշվածություն</i>						
Մնացորդը առ 01.01.2010թ	333,597	16,899	229,735	129,832	48	710,111
Տարվա ծախս	75,888	3,522	22,220	56,855	39	158,524
Օտարում	-	-	(561)	(5,190)	-	(5,751)
Մնացորդը առ 31.12.2010թ	409,485	20,421	251,394	181,497	87	862,884
Տարվա ծախս	78,406	3,817	29,137	39,222	14	150,596
Օտարում	-	-	(59,129)	(2,582)	-	(61,711)
Մնացորդը առ 31.12.2011թ	487,891	24,238	221,402	218,137	101	951,769
<i>Ջուտ հաշվեկշռային արժեք</i>						
Մնացորդը առ 01.01.2010թ	1,189,764	14,809	38,583	114,868	94,306	1,452,364
Մնացորդը առ 31.12.2010թ	1,134,687	11,287	41,019	103,763	98,030	1,388,786
Մնացորդը առ 31.12.2011թ	1,091,755	17,970	21,294	69,450	113,495	1,313,964

5. Ոչ նյութական ակտիվներ

<i>Սկզբնական արժեք</i>				
	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Մնացորդը առ 01.01.2010թ	3,956	-	250	4,206
Ավելացում	-	-	-	-
Մնացորդը առ 31.12.2010թ	3,956	-	250	4,206
Ավելացում	4,739	179	-	4,918

Մնացորդը առ 31.12.2011թ	8,695	179	250	9,124
<i>Մաշվածություն</i>				
Մնացորդը առ 01.01.2010թ	3,956	-	17	3,973
Տարվա ծախս	-	-	25	25
Մնացորդը առ 31.12.2010թ	3,956	-	42	3,998
Տարվա ծախս	246	-	33	279
Մնացորդը առ 31.12.2011թ	4,202	-	75	4,277
<i>Չուտ հաշվեկշռային արժեք</i>				
Մնացորդը առ 01.01.2010թ	-	-	233	233
Մնացորդը առ 31.12.2010թ	-	-	208	208
Մնացորդը առ 31.12.2011թ	4,493	179	175	4,847

6. Պաշարներ

	2011թ	2010թ	2010թ 01 հունվար
Գրասենյակային, տնտեսական և այլ նյութեր	7,653	5,299	15,500
Բեռնզին և դիզելային վառելիք	3,393	3,102	-
Շինանյութեր	6,307	8,122	-
Արագամաշ առարկաներ	2,951	2,362	1,370
Ապրանքներ	115	81	75
Ընդամենը	20,419	18,966	16,945

7. Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

	2011թ	2010թ	2010թ 01 հունվար
Դեբիտորական պարտք ուսման վարձերի գծով	368,977	163,644	16,229
Այլ դեբիտորական պարտքեր	480	143	-
Տրված կանխավճարներ ապրանքների գծով	477	-	-
Տրված կանխավճարներ ծառայությունների գծով	828	5,921	-
Ընդամենը	370,762	169,708	16,229

8. Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով

	2011թ	2010թ	2010թ 01 հունվար
Շահութահարկի գծով	15,735	11,575	19,587
Եկամտահարկի գծով	-	1,987	-
Հաշվանցման ենթակա ԱԱՀ	185	-	-
Սոց. վճարների գծով	-	-	4,586
Այլ վճարների գծով	279	-	5,463
Ընդամենը	16,199	13,567	29,636

9. Գրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2011թ	2010թ	2010թ 01 հունվար
Ընթացիկ հաշիվներ բանկերում	465,147	414,214	307,570
Գրամարկդ	11	7,377	2,218
Ընդամենը	465,158	421,591	309,788

10. Մեփական կապիտալի այլ տարրեր

	2011թ	2010թ	2010թ 01 հունվար
Կուտակման հիմնադրամ	149,009	144,678	63,878
Սպառման հիմնադրամ	223,514	217,018	95,816
Ընդամենը	372,523	361,696	159,694

11. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	2011թ	2010թ	2010թ 01 հունվար
Որպես շնորհ ստացված ոչ ընթացիկ ակտիվների գծով	1,063,347	1,150,339	1,186,301
Ընդամենը	1,063,347	1,150,339	1,186,301

12. Կրեդիտորական պարտքեր և կանխավճարներ

	2011թ	2010թ	2010թ 01 հունվար
Կրեդիտորական պարտքեր ապրանքների գծով	7,512	343	9,817
Կրեդիտորական պարտքեր ծառայությունների գծով	4,190	3,168	1,375
Այլ կրեդիտորական պարտքեր	111	237	-
Ստացված կանխավճարներ ուսման վարձերի գծով	670,902	416,295	330,849
Ստացված կանխավճարներ այլ ծառայությունների գծով	2,950	-	-
Ընդամենը	685,665	420,043	342,041

13. Կրեդիտորական պարտքեր բյուջեին

	2011թ	2010թ	2010թ 01 հունվար
Շահութահարկի գծով	-	1,212	-
Եկամտահարկի գծով	10,222	-	-
Հողի հարկի գծով	-	2,041	-
Այլ վճարների գծով	76	80	58
Ընդամենը	10,298	3,333	58

14. Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով

	2011թ	2010թ	2010թ 01 հունվար
Ավանդագրված աշխատավարձ	3,754	4,183	5,277
Ընդամենը	3,754	4,183	5,277

15. Այլ ընթացիկ պարտավորություններ

	2011թ	2010թ	2010թ 01 հունվար
Ստացված շնորհների գծով հետաձգված եկամուտ	6,226	4,349	-
Կրթաթոշակի գծով	3,931	2,753	2,760
Ապահովագրավճարների գծով	2,131	-	-
Այլ ընթացիկ պարտավորություններ	35	932	-
Ընդամենը	12,323	8,034	2,760

16. Հասույթ

	2011թ	2010թ
Ուսման վարձերի գծով	2,740,983	2,604,456
Ճաշարանի գործունեությունից	6,049	5,641
Կադրերի վերապատրաստման ծառայությունների գծով	400	3,650
Հանգստյան տան գործունեությունից	11,637	-
Ուսանողներին մատուցված այլ ծառայությունների գծով	5,071	5,394
Ընդամենը	2,764,140	2,619,141

17. Վաճառքի ինքնարժեք

	2011թ	2010թ
Անձնակազմի վարձատրություն	(1,317,796)	(2,098,513)
Կրթաթոշակ	(57,376)	-
Հիմնական միջոցների մաշվածություն և նորոգման ծախսեր	(128,969)	(102,729)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	(10,753)	(15,714)
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	(1,297)	(4,890)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	(1,103)	(1,085)
Նյութական ծախսեր	(2,281)	(6,594)
Այլ	(5,625)	(3,244)
Ընդամենը	(1,525,200)	(2,232,769)

18. Իրացման ծախսեր

	2011թ	2010թ
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	(3,267)	(1,344)
Ընդամենը	(3,267)	(1,344)

19. Վարչական ծախսեր

	2011թ	2010թ
Անձնակազմի վարձատրություն	(1,102,249)	(242,955)
Հիմնական միջոցների մաշվածություն և նորոգման ծախսեր	(3,274)	(12,170)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	(12,842)	(4,023)
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	(6,654)	(1,400)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	(52,709)	(7,811)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	(4,018)	-
Բանկային, ապահովագրության ծախսեր	(1,049)	-
Պահանջարկի և տրանսպորտային ծառայություններ	(18,797)	(1,910)
Նյութական ծախսեր	(16,914)	-
Չփոխհատուցվող հարկեր	(11,796)	-
Այլ	(16,804)	(1,119)
Ընդամենը	(1,247,106)	(271,388)

20. Գործառնական այլ եկամուտներ

	2011թ	2010թ
ՀՀ ԿԳՆ ԲՈՀ-ի ֆինանսավորում	28,164	4,050
Ընթացիկ բանկային հաշիվներին հաշվեգրված տոկոսներ	1,238	900
Ուսանողներին մատուցած այլ ծառայություններից	-	514
Այլ եկամուտներ	6,711	6,735
Ընդամենը	36,113	12,199

21. Գործառնական այլ ծախսեր

	2011թ	2010թ
Շնորհների գծով	-	(64,445)
ՀՀ ԿԳՆ ԲՈՀ-ի գծով ծախսեր	(28,164)	(2,345)
Տույժեր և տուգանքներ	(10,978)	(1,093)
Ուսխորհրդի ծախսեր ՀԵՀ-ի հաշվին	(1,975)	(860)
Այլ ծախսեր	(1,741)	(7,138)
Ընդամենը	(42,858)	(75,881)

22. Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)

	2011թ	2010թ
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ եկամուտ	324	(59)
Հիմնական միջոցների օտարումից զուտ եկամուտ	604	135
Անհատույց ստացված (տրված) ակտիվների գծով զուտ եկամուտ (վնաս)	10,793	32,039
Այլ	710	492
Ընդամենը	12,431	32,607

23. Շահութահարկի գծով ծախս

	2011թ	2010թ
Ընթացիկ հարկի գծով	(18,526)	(24,470)
Ընդամենը	(18,526)	(24,470)

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2010թ. 20%):

24. Պայմանական դեպքեր

Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել սույն ֆինանսական հաշվետվություններ համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

25. Նախորդ տարիների սխալների ուղղում

Սխալների ուղղման գումարները կապված են նախորդ տարիներից փոխանցված հարկային մնացորդների և ֆինանսական արդյունքի ճշգրտման հետ:

26. Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Ներկայացվող հաշվետվությունների առումով Խմբի կապակցված կողմերն են՝ նրա հիմնադիրները, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք:

Խումբն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մանրամասները հետևյալն են.

ա) ՀՀ կառավարության հետ՝ որպես վերահսկողի, կատարված գործարքների մանրամասներ.

Անվանումը	2011թ.	Տնացորդ առ	
		31.12.2011	31.12.2010
Ֆինանսավորում*	319,008	1,063,347	313,810

Հազար ՀՀ դրամ

*Պետ. պատվերի շրջանակներում կատարված ծառայությունների փոխհատուցում

բ) Կազմակերպությունում նշանակալի ազդեցություն ունեցող կողմերի հետ կատարված գործարքներ

Խորհրդի անդամների հետ հետ կատարված գործարքներ

Հազար ՀՀ դրամ

Անվանումը	2011թ.	Մնացորդ առ 31.12.2011	2010թ.	Մնացորդ առ 31.12.2010
Խորհրդի անդամների աշխատավարձի վճարմանն ուղղված միջոցներ	86,074	-	92,608	-
Խորհրդի անդամների հետ այլ գործարքներ	600	-	600	-


Հազար ՀՀ դրամ

գ) Գործարքներ վերադաս ղեկավարության հետ

Ստորև ներկայացված է վարչական ծախսերում ներառված վերադաս ղեկավարության հետ գործարքների մանրամասները.

Հազար ՀՀ դրամ

Անվանումը	2011թ.	Մնացորդ առ 31.12.2011	2010թ.	Մնացորդ առ 31.12.2010
Վերադաս ղեկավարության աշխատավարձի վճարմանն ուղղված միջոցներ	30,056	-	22,580	-



Կոլյուն Աթոյան
ռեկտոր




Անուշ Մարգարյան
գլխավոր հաշվապահ